# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 3439-Ա «06» սեպտեմբերի 2024 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 01/50-02-802-24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՆՈՅ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Հայկ Մարտիրոսյանի 2024 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Երևանի քաղաքապետի կողմից 2024 թվականի մայիսի 16-ին տրված թիվ 01/50-02-802-24 շինարարության թույլտվության 2.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«

**2.1 Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝**

☑ ***Ավարտական ակտի տրամադրումից*** (շինության ավարտի պետական գրանցման հաջորդ օրվանից) ***6 ամսվա ընթացքում:***
*(սույն տողը նշվում ու լրացվում է նոր կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի դեպքում)* (շահագործման թույլտվության ձևակերպման ժամկետը)

☐ ***Ավարտական ակտի տրամադրման օրը:***
*(սույն տողը նշվում է ավարտական ակտի և շահագործման թույլտվության ստացման ժամկետի նույնը լինելու դեպքում)*

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը: Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի մայիսի 16-ից ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**